


ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ



ԳՐԱՎԱՆՆԵՍ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԻԿՅԱՆ, ԲԱՆԱՍՏԵՐԾ, ՈՎ ԲՈԼՈՐԻՆ ՎԱՐԱԿՈՒՄ Է ԱՆԾԱՅՐ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

ԳՐԱՎԱՆՆԵՍ ՄԱՐԻԿՅԱՆ

Մ Ա Ն Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երբ ամառը գա, զնամ Արջի գոլ,
Սեւ պալը որ կա, կողքին՝ ծառակույտ,
Ծամփեքով ծաղկանց բլուրը հասնեմ,
Ու լանջին միտքեմ միմջեմ մայրամուտ:

Հավքը եթերում թող մեղմիկ երգի,
Իսկ ես ուսերին շարված լեռների,
Անցած օրերի, քաղցրիկ ու անուշ,
Ժիր մանկությունս կաթ-կաթ ժողվեի:

Այն օրը ետ գար, երբ ծեգին արփու,
Ուխտավորի պես բոքիկ, դողդոջուն,
Ամառը կարմիր՝ հատիկավոր նուռ,
Կրկին այցելեի իմ հոգուն արթուն:

Մայրս գալիս էր հեռվից ժպտաղեն,
Ինչ անուշ օրեր... թեեւ սովաշունչ,
Հաց ու պանիր էր թեւատակին դրած
Կամ էլ շուշանով համեղ մի բրդուծ:

Ասում էր՝ բալե՛ս, դու սովից մեռար,
Օրը մթնում է, ե՛րբ պիտի տուն գաս,
Արեւից խանձված երեսս էր շոյում,
Ու ձեռքս բռնած՝ տուն գնանք, տղա՛ս...

Բնակիչների նման, ձեր թերթի հավատարիմ ընթերցողն է, յուրաքանչյուր համարի անհամբեր սպասողը, եւ թող որ իր սիրելի պարբերականում այս շնորհավորանքն անակնկալ դառնալով նորից ջերմացնի ու ուրախացնի նրան:

Հովհաննեսը, իր ողջ կյանքը գրականության մեջ ապրող ու նրանում արարող բանաստեղծը, տարածաշրջանում հայտնի Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի ծնունդ է, իր երկրի լավագույն մկրյալներից է: Բանաստեղծական նրա առաջին՝ «Մորս համար» գիրքը լույս է տեսել 1993 թվականին, որին հաջորդել են մյուս յոթ ժողովածուները՝ «Կալանված կարոտ», «Հառաչող ողբերգություն», «Յավի բողբոջներ», «Կյանք կյանքից հետո», «Ավանդապաշտ հերոսուհու փնջածաղիկը», «Հարազատը հարազատին սատար», «Մայրամուտ»:

Հովհաննես Մարիկյանի անունն ընթերցողին հայտնի է նաեւ «Վրաստան» թերթից, «Վերնատուն», «Կամուրջ» տարբերակներից, ուր հաճախ է տպագրվել իր չափածո տողերով: Նա Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամ է: Պարգևատրվել է Հայաստանի սփյուռ-

քի նախարարության պատվոգրով, «Մայրենիի դեսպան» մեդալով: Այս ամենի հետ սիրված բանաստեղծը շարունակում է մնալ նույն համեստ, խորապես մարդկային, ազնիվ ու բարի: Տարիները միայն իմաստացրել են նրան, առավել կոփել, բայց ոչ հուսահատեցրել, նույն մարդասերն է ու բոլորիս վարակում է իր անծայր լավատեսությամբ ու ապագայի հանդեպ հավատով այնպես, ինչպես իր քնարերգությունը: Հովհաննես Մարիկյանը շարունակում է ապրել հայրենի բնօրրանում, այստեղ սնունդ առնում, սիրում Վրաստանը ու անտրտուն, առանց հավելյալ գովազդի պահում հայ գիրը, դպրությունն ու մշակույթը նրանում:

Շնորհավորում ենք, սիրելի՛ Հովհաննես, համոզված ենք, որ ամեն ինչ դեռ առջեւում է, շարունակի՛ր ստեղծագործել, գրչիդ բեղունություն, քեզ անսպառ ու ամուր առողջություն, թող տարիներդ առատ լինեն երջանիկ պահերով, իսկ այս տողերի ավարտին ներկայացվող քո բանաստեղծությունը, որն անչափ սիրում ենք, արթնացնի լավագույն հուշեր...

ԿՈՐՅՈՒՆ ԲԱՍԵՆՑՅԱՆ

Մանկավարժ

Նինոծմինդայի մունիցիպալիտետ, գյուղ Հեշտիա

«Վրաստան» թերթը միանում է Հովհաննես Մարիկյանին ուղղված շնորհավորանքներին, իր սիրելի ընթերցողին մաղթելով ստեղծագործական առատ առօրյա ու ամուր առողջություն:

ՄՇԱԿՈՒՅՑ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ. «ԶԱՐՄԱՆԱՔ, ՊԱՇՏՈՒՄ ԵՄ «ՈՉ» ԲԱՌԸ...»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

«Բաբլունյանը միշտ ուզում էր, որ կայանայի որպես դիրիժոր, սակայն սիմֆոնիկ-օպերային մասնագիտացումն այստեղ չկար, պատմում Հովհաննեսը: Նպատակին հասնելու առաջին փուլը՝ Գերմանիայի երաժշտական բարձրագույն հաստատությունների պրոֆեսորներին հեղինակային ստեղծագործությամբ ներկայանալ էր: Դրական արձագանքն ու հրավերը եկավ միանգամից 9 քաղաքից: Բայց Գերմանիա մեկնելու եւ այնտեղ սովորելու համար հսկայական գումար էր հարկավոր: Այս մասին առիթ չեմ ունեցել հրապարակավ խոսելու, բայց երախտագիտությամբ կուզեի նշել, որ իմ մեկնումն ու ուսումնառումը Գերմանիա առաջվեց հայկական AGBU (խմբ. Հայկական բարեգործական ընդհանուր միություն), YerazArt եւ Վիրահայոց թեմի այդ տարիների առաջնորդ Տ. Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի երաշխավորությամբ՝ KAAD (խմբ. Կաթոլիկ ակադեմիական ծառայություն, որն օգնում է օտարերկրյա ուսանողներին) հիմնադրամների ֆինանսական օգնությամբ: Իսկ ինչո՞ւ հենց Մյունխեն, որովհետեւ կյանքն ինձ հասցրել էր կապել եւս մեկ նշանավոր մարդու, իմ ու լեգենդար դաշնակահար Մամիկոն Նահապետովի դասախոս, թբիլիսցի Դեվիլ Հա-

րությունովի հետ: Դեվիլը 40 տարի դասավանդել էր Մոսկվայի կոնսերվատորիայում, ապա վերադարձել ծննդավայր: Հենց ինքը մատնանշեց Մյունխենը, ասաց՝ այնտեղ Մամիկոն Նահապետովն է: Մամիկոնի անունը շատ էի լսել, քանի որ նույնպես թբիլիսցի էր ու թող անհամեստություն չթվա, բայց աշխարհում մեր օրերի եզակիներից մեկն է իր ոլորտում: Չմանրամասնեմ, բայց, եթե չլիներ իր հանճարեղության մեջ բացառիկ համեստ Նահապետովը, Մյունխենում իմ լինելությունն այսօր չէր հաջողվի, հավերժ երախտապարտ եմ մնալու սիրելի ու հանճարեղ ընկերոջս:

Հովհաննեսն ընդունվեց Մյունխենի երաժշտության եւ թատրոնի բարձրագույն դպրոցի կոմպոզիցիայի բաժնի մագիստրատուրա, Կարմիր դիպլոմով ավարտեց այն 2017-ին, որից հետո ընդունվեց ու արդեն այս տարի ավարտեց հաջորդ՝ որակավորված վարպետի աստիճանը:

«Պաշտում եմ «ՈՉ» բառը...»

Հովհաննեսը դիրիժորության պատմության մեջ լավագույնը համարվող Քրիստիան Թիլեմանի՝ Դրեզդենի շտապտակապետի (սիմֆոնիկ պետական նվագախումբ) գլխավոր դի-



ու լսեմ քեզ: Պետք է լինես համառ: Նախքան «այո»-ին հասնելը պետք է հազար անգամ «ոչ» լսես»,- ասում է Հովհաննեսը:

Իր «համառության» շնորհիվ, երաժշտառատ Գերմանիայում, ուր արիեստավարների պակաս երբեք չկա, Հովհաննեսը մեծ պահանջարկ ունի: Դասավանդում է կոմպոզիցիա եւ ֆորտեպիանո Մյունխենի երաժշտական գիմնազիաներից մեկում, իսկ մարտի Դրեզդենի կամերային անսամբլի գլխավոր դիրիժորն է:

«Տարբեր պատվերներ ունեմ, ձեւավորում եմ ցուցահանդեսներ, գրում երաժշտություն ֆիլմերի եւ անիմացիայի համար,- ասում է Հովհաննեսը: - Տարիներ առաջ հեղինակեցի Աբխազիայի մասին պատմող ֆիլմ Թբիլիսիում: Մեծ սիրով գրել եմ նաեւ երաժշտություն Թբիլիսիի Գեղարվեստի ակադեմիայի դասախոս Խաթունա Տատուաշվիլիի «Օ դերա, դերա» անիմացիոն ֆիլմի թրեյլերի համար, որը մասնակցում էր Լոնդոնի «One minute» կինոփառատոնին:

Այսօր էլ Հովհաննես Համբարձումյանը շարունակում է ուսումը Դրեզդենի կոնսերվատորիայի դիրիժորության բաժնում ու Թբիլիսիի կոնսերվատորիայի դոկտո-

րանտուրայում միաժամանակ, ընդամենը վերջերս Մյունխենում ստացավ որակավորված վարպետի աստիճանը: Ու սա դեռ ավարտը չէ...

«Մասնում եմ ընդունվել Մյունխենի թագավորական համալսարանի աստվածաբանության բաժին,- «Վրաստանի» հետ կիսվում է Հովհաննեսը: - Սովորելու եմ լատիներեն, հին հունարեն եւ կրոնի պատմություն:

«Ապրիլի 12-ին, Թբիլիսիում, միջազգային մրցույթների անվանի դափնեկիրներ Մամիկոն Նահապետովը, Նատալյա Բոեւան, Դմիտրի Բոջոլիշվիլին՝ հանդես կգան իմ ստեղծագործություններով...»:

Ապրիլին Թբիլիսիի կոնսերվատորիայի մեծ համերգասրահում կկայանա երիտասարդ կոմպոզիտոր ու դիրիժոր Հովհաննես Համբարձումյանի ստեղծագործական երեկոն:

«Փետրվարի 2-ին Մյունխենում ֆանտաստիկ համերգ ունեցիմ,- ասում է Հովհաննեսը: - Կուզեի Թբիլիսիում նույնպես վայելեի այդ ծրագիրը՝ մեր հանճարեղ կատարողների մասնակցությամբ: Իմ հարազատ քաղաք Թբիլիսիում նախատեսում եմ համերգն անցկացնել ապրիլի 12-ին: Թունանյանական քառյակները, այդ թվում՝ «Երկու շիրիմը», հաստատ հնչելու են... այս վերջինը մկրել եմ ծնողներիս լույս հիշատակին...»:

ԳՆԱՆԵ ԲՈՍԱՆՋՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱԼԵԲՍԱՆԴՐԵ ԲՈՉԻԱՇՎԻԼՈՒ ԶԵԿՈՒՅՑԸ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԶԵԿՈՒՅՑԸ ԶԵԿՆԱԿ Է ՆԱԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ «ՊԱՎԱԴԻՐՆԵՐԻ» ԱՇԽԱՐՀԱՈՍՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ARMENIA»

Փետրվարի 28-ին կայացավ Վրաստանի Ազգային գիտությունների ակադեմիայի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հանձնաժողովի նիստը, որտեղ «Նեոլիթերալիզմը եւ դրա այլընտրանքը» թեմայով զեկույց ունեցավ հանձնաժողովի անդամ, «Ֆագիսի» գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդրե Բոչիաշվիլին:

Թեման մշակվել էր նրա կողմից անցյալ դարի վերջերին լույսընծայված «Լուցիֆերի բացահայտումները» գրքի հիման վրա, որտեղ Ալեքսանդրե Բոչիաշվիլին քննադատում է վերոնշյալ գաղափարաքաղաքական ուղղությունն ու հանրությանը կոչ է անում դրա փոխարեն ընդունել «Կոմունիստարիզմը»: Գրքում պաշտպանված են մարդկանց սոցիալական արդա-

րադատությունն ու տնտեսական իրավահավասարությունը:

Զեկույցի հեղինակը լրիվությամբ պարզաբանում է «Նեոլիթերալիզմի» էությունը:

Զեկույցի թեման լուրջ հետաքրքրություն է առաջացրել, անցկացվել է քննարկում: Թեեւ, ելնելով թեմայի ծավալից՝ «Կոմունիստարիզմի» էությունը ժամանակի սղության պատճառով լրիվությամբ չքն-

նարկվեց: Հատկանշական է այն, որ մոտ ապագայում հանձնաժողովը կրկին կանդիդատուրա վերոնշյալ հարցի ուսումնասիրությանը: Ազգային ակադեմիայի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների նիստին հրավիրված էին հայտնի գիտնականներ եւ հասարակական գործիչներ:

Նշենք, որ Ալեքսանդրե Բոչիաշվիլին մի շարք գրքերի հեղինակ է, այդ թվում՝ հայ ժողովրդի պատմությանը նվիրված



«Դավադիրների» աշխարհառազմավարությունը եւ Armenia», «Աստղաբանություն, կենդանակերպ, մագիա» եւ այլն:

ԱՆՆԱ ՄԱՐԻԲԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԴՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԲԵՈՒԽՆՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ՕԼԱՅ ՇՈԼՑԻՆ



Այցի շրջանակում, Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի, նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերի հետ:

Մարտի 2-3-ը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, աշխատանքային այցով գտնվում էր Գերմանիայում:

Բացի այդ, Հայաստանի վարչապետն այցելեց Գերմանիայի Արտաքին հարաբերությունների գերմանական խորհուրդ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ու Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հանդիպմանը ընդգծվեց երկու երկրների հարաբերություններում առկա զարգացման մեծ ներուժը եւ պատրաստակամությունը՝ հետեւողականորեն համագործակցել նոր, ավելի հավակնոտ օրակարգ ձեւավորելու հարցում:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաեւ հայ-գերմանական ֆինանսական եւ տեխնիկական համագործակցությանը, մասնավորապես՝ գերմանական միջազգային համագործակցության գործակալությունների՝ GIZ-ի եւ KFW-ի գործունեությանը Հայաստանում:

Նրանց հանդիպման օրակարգում էին նաեւ Հայաստան-Եվրամիություն գործընկերությանն առնչվող հարցեր: Ընդգծվեց Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի կարելիությունը:

ՍՈՒՐԳԱՅԻՐԵՅԱՆ ՈՒՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ 35 ՏԱՐԻ ԱՆՅ...



1988 թվականի փետրվարի 27-29-ը Սոււ-գայիթում իրականացված հայերի ջարդերի տարեկիցին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը, Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ու Անվտանգության խորհրդի անդամներն այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու ոճրագործության զոհերի հիշատակին: Բարձրաստիճան պաշտոնյաները ծաղկեպսակ դրեցին եւ ծաղիկներ խոնարհեցին Ադրբեջանի Սոււգայիթ, Կիրովաբադ, Բաքու քաղաքներում կոտորածներին զոհ զնայած հայերի հիշատակը հավերժացնող խաչքարերին: Տարեկիցի առիթով միջոցառումներ անցկացվեցին նաեւ աշխարհի տարբեր քաղաքներում, այդ թվում Թբիլիսիում:

2023 ԲՎԱԿԱՆԻ ՄԵԿԵԱՐԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԵԼ Է ՄԵՆԻՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԳԻՆԱՄԻԿԱ

Հայաստանում ծնելիության ցուցանիշը 2022 թվականին, 2021 թվականի համեմատ, նվազել է. սակայն 2023 թվականի հունվարին որոշակի դրական դինամիկա է արձանագրվել: Հայաստանի Առողջապահության նախարարության տեղեկությամբ, 2020 թվականի ընթացքում եւ 2021 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է ամուսնությունների նվազում, թեպետ 2023 թվականի հունվար ամսին նկատվում է հակառակ միտում՝ հունվար ամսին արձանագրվել է վերջին երեք տարիների ընթացքում հունվար ամիսների կտրվածքով ամենաբարձր ծնելիությունը: Առաջին անգամ 3000 հազարը: Հայկական շական է, որ տասը տարվա կտրվածքով գրեթե կրկնապատկվել է երրորդ եւ չորրորդ երեխաների թիվը:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՐԱՍՏԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԱՐՏԱՆԱԽԱՆ ԾԱԿԱԼԸ ԹԵՂԵՂԱԳԵՎ ԱՎԵԼԱՅԵԼ Է

Արդեն մեկ տարի է Հայաստանում էներգետիկ շուկան ազատականացվել է: Արդյունքում շուկայում հայտնվում են նոր վաճառողներ, ավելանում է մրցակցությունը, որը բերում է մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Նոր պայմանակարգի արդյունքում, նախորդ տարի դեպի Վրաստան արտահանված էլեկտրաէներգիայի քանակը գերազանցել է վերջին 10 տարիների գումարային ցուցանիշին: 2022 թվականին Հայաստանից դեպի Վրաստան 328 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա է արտահանվել:

ՍԵՎՆԱ ԱՆԻ ՄԱԿԱՐԱՎԵ ԵՎԱԳԵԼ Է

Սեւանա լիճը 2023 թվականի մարտի 1-ի դրությամբ ծովի մակերեւույթից գտնվում է 1900 մետր 25 սանտիմետր բարձրության վրա, ինչը 14 սանտիմետրով ցածր է նախորդ տարվա նույն օրվա գրանցված 1900 մետր 39 սանտիմետր նիշից: 2023 թվականի հունվար-փետրվար ամիսներին Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 5 միլիոն 74 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լիճ թափվող գետերում ջրի էլքերի էական փոփոխություններ չեն գրանցվել:

ՎԱՐԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ. «ԱՇԽԱՐՀԻ ՇԱՏ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԼԻՆԵԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ի պատիվ մեր երկու երկրների այսօրվա կառավարությունների, կարող ենք ասել, որ ամեն ինչ արվում է, որպեսզի ավելի զարգացնենք, խորացնենք մեր տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերություններն ու կապերը:

Կարծում եմ, աշխարհի շատ ժողովուրդների համար հայ-վրացական հարաբերությունները կարող են օրինակելի լինել: Քիչ երկրներ կան, որ այսպիսի դարավոր կապեր ունեն, կողք-կողքի են ապրել, պատմության ընթացքում միմյանց հետ չեն պատերազմել, խնդիրներ չեն ունեցել:

Համոզված եմ, որ Դուք եւս այդ ավանդույթների, սովորույթների շարունակողը կլինեք: Մենք միասին ամեն ինչ կանենք՝ մի նոր աստիճանի բարձրացնելու մեր հարաբերությունները, - ասաց Հայաստանի նախագահը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ նորանշանակ դեսպանը նշեց. - Պարոն նախագահ, շնորհակալություն բարենաղթանքների եւ այսպիսի ջերմ ընդունելության համար: Իհարկե, մեր հարաբերությունները, իրոք, եզակի են, որովհետեւ իրապես դժվար է գտնել այնպիսի ժողովուրդ, որ դարեր շարունակ այսպես կողք-կողքի ապրել են: Այս ամենն, իհարկե, պետք է փոխանցենք մեր հաջորդ սերունդներին, համաձայն եմ, որ պետք է նոր շունչ հաղորդենք մեր հարաբերություններին:

Իհարկե, ես ամեն ինչ կանեմ, որ իմ առաքելության ընթացքում փորձեմ զարգացնել որոշակի ուղղություններ, նպաստեմ երիտասարդների միջեւ երկխոսության ակտիվացմանը, մշակույթի, տնտեսական ոլորտում ավելի

սերտ հարաբերությունների ձեւավորմանը:

Հանդիպմանը քննարկվեցին վրաց-հայկական բազմաշերտ համագործակցության ոլորտների վերաբերյալ օրակարգային հարցեր, Վրաստանի եւ Հայաստանի գործարար շրջանակների միջեւ փոխգործակցության խթանման ուղղություններ:

Անդրադարձ կատարվեց նաեւ տարածաշրջանային հիմնախնդիրներին եւ դրանց լուծման հեռանկարներին: Երկուստեք շեշտվեց Հարավային Կովկասում կայուն ու հարատեւ խաղաղության հաստատման անհրաժեշտությունը:

ԺՈՂՈՎՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՅՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փետրվարի 28-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, անցկացվեց խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին ժողովրդագրական ռազմավարության մշակմանը վերաբերող հարցեր:

Մասնավորապես, անդրադարձ կատարվեց ժողովրդագրական ներկայիս իրավիճակին, առկա ռիսկերին եւ հնարավորություններին, միգրացիոն հոսքերի կառավարմանը, բնակչության կառուցվածքի

րին եւ հնարավորություններին, միգրացիոն հոսքերի կառավարմանը, բնակչության կառուցվածքի

փոփոխություններին, ժողովրդագրական ծրագրերին եւ այլ թեմաներին:

Ծավալվեց մտքերի շահագրգիռ փոխանակություն՝ մշակվելիք ռազմավարության նպատակների եւ թիրախների վերաբերյալ:

ՍՓՅՈՒՌԲԱՅԱՅ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը սկսում է «ԻԳՐՈՐ» 2023 ծրագրի հայտարարումների ընդունումը: Ծրագիրը սփյուռքահայ մասնագետներին հնարավորություն է տալիս, մեկ տարի ժամկետով, աշխատել Հայաստանի պետական կառավարման 20-ից ավելի մարմիններում:

Ծրագրին կարող են դիմել այն սփյուռքահայ մասնագետները, որոնք ունեն բակալավրի աստիճան եւ առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ կամ մագիստրոսի աստիճան (կամ համարժեք կամ ավելի բարձր) եւ 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

2023 թվականի հայտարարումներն

ընդունվում են մինչեւ ապրիլի 5-ը՝ հայերենով, անգլերենով եւ ռուսերենով: Հարցազրույցների վերջնական փուլը հաջողությամբ անցած մասնագետներն այս տարվա սեպտեմբերի 1-ից աշխատանքի կանցնեն համապատասխան գերատեսչություններում:

Ծրագրի մանրամասներին ծանոթանալու եւ հայտարարումները լրացնելու



համար, կարող եք այցելել Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կայք՝ հետեւյալ հղմամբ. <http://diaspora.gov.am/hy/programs/25/fellowship>:

ՀՈՒՆՎԱՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼ Է 10,5 ՏՈԿՈՍ



Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվարին, նախորդ տարվա հունվարի համեմատ, ավելացել է 1,4 տոկոսով: Շինարարության ծավալը այս տարվա հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 12,2 տոկոսով:

Հայաստանի վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը՝ 2023 թվականի հունվարին 10,5 տոկոսով ավելացել է նախորդ տարվա հունվարի համեմատ, այնինչ, այս տարվա հունվարի ցուցանիշը, 2022-ի դեկտեմբերի համեմատ, նվազել է 46,1 տոկոսով:

Առևտրի շրջանառությունում հունվարին, 2022-ի հունվարի համեմատ, ավելացումը կազմել է 17,7 տոկոս: Հայաստանում 2023 թվականի հունվարին մատուցված ծառայությունների ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 25,9 տոկոսով:

2023 թվականի հունվա-

րին սպառողական գների ինդեքսը, 2022-ի հունվարի համեմատ, աճել է 8,1 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը հունվարին, նախորդ տարվա հունվարի համեմատ, աճել է 1,6 տոկոսով: Իսկ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը այս տարվա առաջին ամսին, նախորդ տարվա նույն

ժամանակի համեմատ, նվազել է 1,5 տոկոսով:

Արտաքին առևտրաշրջանառության ծավալներում այս տարվա հունվարին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, արձանագրվել է 93,8 տոկոս աճ: Ընդ որում, արտահանումն աճել է 2,3 անգամ, իսկ ներմուծումը՝ 72,5 տոկոսով:

ՄԱՐՏԻ 3-Ը՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՕՐ

Մարտի 3-ին Վրաստանը նշեց Մայրության տոնը:

Մայրության օրվա կապակցությամբ Բոլնիսի մունիցիպալիտետի քաղաքապետ Դավիթ Շերագադիշվիլին եղավ Բոլնիս-Խաչեն գյուղում, որտեղ տոնի առիթով շնորհավորեց 34-ամյա, բազմազավակ, հինգ երեխայի մայր Աղավնի Արզումանյանին, նրան հանձնելով ծաղկեփունջ եւ նվերներ:



«Վրաստան» թերթը շնորհավորում է երկրի բոլոր մայրերին Մայրության օրվա առիթով, մաղթում առողջություն, երջանկություն, հաջողություններ կյանքում եւ աշխատանքում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

4.03.2023 Սուրբ Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի, Կյուրեղ եպիսկոպոսի եւ նրա մոր՝ Աննայի հիշատակության օր

ՄԱՐՏ

11.03.2023 Սրբոցն Երուսաղեմի Հովհաննիս Զայրապետի, հայոց Հովհաննես Օծնեցի Հայրապետի, Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի վարդապետների հիշատակության օր

5.03.2023 Անառակի կիրակի

ԹԵԺ ԳԻԾ

ԲՈՒՐՈՒՆ ԱՆԶՐԱԺԵՑ ՇԵՌԱՆՈՍԱԶԱՄԱՐՆԵՐ

Շտապ բժշկական օգնություն - 112
Պարեկային ոստիկանություն - 112
Հրդեհ-փրկարար ծառայություն - 112
Պահակային ոստիկանություն - 125
Գլխավոր տեսչություն - 126
Տեղեկատու բյուրո - 118 08
Քաղաքապետարանի թեժ գիծ - 272-22-22
Առողջապահության նախարարության թեժ գիծ - 15-05
Ժողովրդական պաշտպան - 299-58-98, 292-24-79
Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - 14-81
«Թբիլիսի Լենքի»-ի տեղեկատվական ծառայություն - 114, 240-40-04
«Վարկէթիլի»-ի տեղեկատվական ծառայություն - 227-50-40
ԹԵԼՄԻԿՈՒ-ի թեժ գիծ - 16 700, (+995 32) 5 000 777
Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11
Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - (593) 50-42-52
Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - 231-03-41, 231-04-21
Երկաթուղային կայարան - 1331, 2199010
Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - (599) 74-73-73

ՄՊՈՐՏ

ԲԱՍԿԵՏԲՈԼ. «ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑԱՎ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿՄԱՍՆԱԿՑԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

Ինչպես նախորդ համարում կանխագուշակել էր «Վրաստան» թերթը, Վրաստանի բասկետբոլի հավաքականը կմասնակցի 2023 թվականի օգոստոսի 25-ին Ֆիլիպիններում, ճապոնիայում եւ Ինդոնեզիայում մեկնարկող աշխարհի առաջնության եզրափակիչ փուլին:



Եվրոպական «Լ» խմբում հանդես եկող Վրաստանի հավաքականը, խմբային երրորդ տեղը զբաղեցնելու, հետևաբար, աշխարհի առաջիկա առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու համար, պետք է խմբում իր հիմնական մրցակցի՝ Իսլանդիայի հետ սեփական հարկի տակ անցկացվելիք մրցամարտում կա՛մ հաղթեր, կա՛մ ծայրահեղ պարտության դեպքում, զիջեր առավելագույնը 3 միավորով:

Եվ ի պատիվ, վրաց բասկետբոլիստների, հարկ է նշել, որ փետրվարի 26-ին մրցամարտում նրանք արժանիորեն դիմակայեցին մրցակցին եւ, ճիշտ է, զիջեցին 77:80 հաշվով, միավորների տարբերությամբ պատմության մեջ առաջին անգամ նվաճեցին այս տարվա օգոստոսին մեկնարկող աշխարհի բասկետբոլի առաջնության եզրափակիչ փուլին մասնակցելու ուղեգիր:

Հաջողության կապակցությամբ վրաց բասկետբոլիստներին շնորհավորեցին վճռորոշ մրցամարտի ժամանակ ազգային հավաքականին ոգեւորությամբ պաշտպանող Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, Մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Թեա Ծուլուկիանին, Արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն, Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Իրակլի Քարսելաձեն, պաշտոնական այլ անձինք:

Ի դեպ, խմբի առաջին երկու տեղը զբաղեցրել էին Իսպանիայի եւ Իտալիայի հավաքականները:

«ԲԱՎՈՒՐԻԱՆԻ 2023». ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԵԶՐԱԳԾԻՆ

Եզրագծին է մոտենում Բակուրիանիում փետրվարի 18-ին մեկնարկած դահուկապարի, սնուրբորդի եւ ֆրիսկի աշխարհի առաջնությունը:

Ցավոք, Վրաստանը ներկայացնող մարզիկ-մարզուհիներից ոչ մեկին, բացառությամբ Դավիթ Թեդիաշվիլուց, չհաջողվեց հաղթահարել որակավորման փուլը: Որակավորման փուլն անցած դահուկային կրոսի եզրափակչում վայրէջք կատարելիս, ցավոք, վրիպեց եւ չկարողացավ հաղթահարել տարածությունը:

Մարտի 3-ի դրությամբ, թիմային հաշվարկում առաջնության մրցաշարային աղյուսակը 8 (Յոսկե, 2 արժաթ, 3 բրոնզե) մեդալով գլխավորում է Շվեյցարիայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը 5-ական մեդալով զբաղեցնում են, համապատասխանաբար, Կանադայի (2,2,1) եւ Շվեդիայի (2,1,2) հավաքականները: Ընդհանուր առմամբ, Բակուրիանիում անցկացվող աշխարհի



առաջնությունում տարբեր արժողության մեդալների են արժանացել 13 երկրների ներկայացուցիչներ:

Առաջնությունը եզրագիծը կհատի վաղը՝ մարտի 5-ին:

	1		2		3		4		5		6
7					8		9				
					10						
11		12					13	14		15	
	16				17						
				18			19		20		21
22			23				24				
			25		26						
27	28						29		30		31
					32						
33		34							35	36	37
	38					39	40				
				41	42		43				
44	45		46		47				48		49
	50						51				52
	53								55		

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 7.Կոր թուր: 9.Գարնան ամիս: 10.Արտաքին կերպարանք: 11.Կաթ ուտող, ծծկեր: 13.Խաղաթուղթ: 16.Աղոթք «... Մարիա»: 17.Գետ Գերմանիայում: 19.Ֆինանսական եկամուտների եւ ծախսերի պլան, որը սահմանվում է ճշգրիտ ժամանակահատվածի համար: 22.Սապատավոր, կորամեջք: 24.Պլան, նախագիծ: 25.Թագավորական պաշտոնատար անձ վաղ միջնադարում արեւմտյան Եվրոպայում: 27.Ռուսական էստրադային երգչուհի: 29.Դերասան, գրող եւ նկարիչ ... Քուլին: 32.Դերասանուհի եւ երգչուհի ... Սինելի: 33.Քաղաք Բուլղարիայում: 35.Փշերով պատված, տատակոտ: 38.Սլավոնական ազգ: 40.Ոտքի հարված: 41.Ինքնատիպ արտաքին: 44.Նրանք (արեւմտ.): 47.Արձակագիր եւ դրամատուրգ ... Կորե: 48.Դերձակի գործիք: 50.Դերասանուհի Լեյտոն ...: 51.Ընտանիքի կաթնատու կենդանի: 52.Սերոպայան այբուբենի տառ: 53.Թբիլիսիում ծնված խորհրդային երգիչ ... Հովհաննիսյան: 54.Փոքրիկ եղեգնյա սրինգ: 55.Կարծես:

ՈՒՂԱՆԱՅԱՆ. 1.Զբոսանավ: 2.Շախմատում գրոհ թագուհու վրա: 3.Կտոր, թիք: 4.Գետ Հայաստանում: 5.Հավատք: 6.Քաղաք ՈՂ-ում: 8.Սատար, զորավիգ: 12.Քիչ, սակավ: 14.Հնդկական կորբա: 15.Գետ Հայաստանում: 18.Բենեախույզ Ռոբերտ ...: 19.Անագապղինձ: 20.... - ֆինանսական լեզվաբանական: 21.Գուցե: 23.Քաղաք Պերուում, Ամազոնի ավիին: 26.Պետություն Աֆրիկայում: 28.Բակազգիների ընտանիքի միանյա եւ բազմանյա խոտաբույսերի ցեղ: 29.Շառլոթ Բրոնտեի դասական ստեղծագործությունը՝ «Ջեյն ...»: 30.Ավտոմեքենայի մաս: 31.Դժգոհության արտահայտում, մլավոց: 34.Պետություն Եվրասիայում: 36.Հաջողության հավանականություն: 37.Իշխանական պատվավոր կոչում: 39.Պաղեղ (ժողովրդի մեջ տարածված անուն): 42.Շարքով քայլ: 43.Դերասան ... Չան: 45.Ինչ-որ մեկը: 46.Ոչխարի բուրդ: 48.Դերասանուհի ... Գարդներ: 49.Թե (եւ կամ):

Կազմեց ԷԼԼԱ ԱՌԱՐԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ. 1.Ալեքսիձե: 5.Աղայան: 10.Բրեստ: 11.Երե: 12.Զիս: 14.Ատր: 15.Արաբ: 16.Տեմո: 17.Բոր: 19.Ակտիվ: 20.Բար: 21.Դեկ: 24.Սան: 26.Մոնթե: 30.Բակ: 31.Մանարյան: 33.Ուստա: 34.Կալիում: 35.Արոր: 38.Սի: 39.Տակ: 40.Դվին: 42.Լոր: 43.Նոքար: 44.Խումբ: 46.Եմա: 49.Շիրին: 50.Արախի: 51.Քան: 52.Մշակ: 54.Գորի: 55.Բոգոտա: 56.Լին:

ՈՒՂԱՆԱՅԱՆ. 1.Արբատ: 2.Երեքնուկ: 3.Սատար: 4.Ձմերուկ: 6.Ուզար: 7.Յասաման: 8.Նեղոս: 9.Սերբիա: 13.Իր: 18.Ով: 20.Բակուրիանի: 22.Երակ: 23.Իորի: 24.Սա: 25.Միսաք: 26.Մալի: 27.Նյուտոն: 28.Թամար: 29.Են: 30.Բորդո: 32.Նախիմ: 36.Ովքեր: 37.Վախթանգ: 41.Նրանք: 43.Նուշիկ: 45.Բաստիկ: 47.Դոնբաս: 48.Արշիլ: 53.Մոմ:

ԳԼԽԱՎՈՐ ԽԱՄԲԱԳԻՐ՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ

Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆԱՅՅԵՄՈ: ՄԺԺԸՈՆԵ 0105, ՃԱՄԲԵՂՈՆ ՄՅՅԻ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԾՅԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈՒՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆԻՅԱՆ»
ՄԺԺԸՈՆԵ, ՆԱՅՅԵՄԵՂՈ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445